# ՓՈՒՆՋ

Թիւ 1168 — ՇԱԲԱԹ — 1877 ԱՊՐԻԼ 16


## ԱԶԳԱՅԻՆ

Նշանակութեան արժանի տեղեկութիւն մը չունիմք այսօր։ Թառն ժողով գումարուելով երէկ ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, Սոյ կաթողիկոսական խնդրոյն վրայ բաւական խորհրդակցութիւն եղաւ, բայց դարձեալ որոշում մը չտրուեցաւ, և հետևաբար դարձեա՛լ մեր բիւրաւոր ազգայինք ճնցին անոք ու անխնամ։ Ո՛ դիտե, ուրիշ անգամ ե՞րբ պիտի գումարի Թառն ժողովն, և այս խնդիրը կարգադրել պիտի յաջողի։

Այսօր դաւառներէն եկած գիր չունիմք, բաց ի Տէմիրհօգայէ գրուած նամակէ մը, որ քիչ մը վերջը պիտի տեսնուի, և որոյ պարունակութիւնն ալ ցաւալի է։

Գաւառականներէ զատ՝ կա՛ն թաղային խնդիրներ ալ, ինչպէս Գումրւոյ, Իւսկիւտար Սէլամիյէ, և էն. բայց ասոնց համար Պատրիարքարանէն ո՛ր և է տնօրինութիւն եղած չէ։ Կրօնական ժողովն երկուշաբթի որոշում մ՚ըրեր է, որոյ վրայ կարծեմք դժգոհութեան ձայներ պիտի լսուին։ Մաղբմեան Առաքել վարդապետը՝ ղրկ Ս. Պատրիարքը Գասբմ-փաշայի եկեղեցւոյ քարոզիչ անուանած էր, ներելով նորա յանցանաց, կրօնական ժողովն աններող գտնուելով՝ որոշեր է ապաշխարութեան համար Լիմ անապատը ղրկել։

Այս համառօտ ծանօթութեամբ այս անգամ բաւականանալով՝ կանցնիմք նըշանակել թէ վաղը Իւսկիւտարի Սէլամիյէի վարժարանին մէջ ուսումնական ծանուցեալ ազգային մը կարևոր ատենախօսութիւն մը պիտի ընէ, ի խնդրոյ Մամիկոնեան ընկերութեան տեղւոյն։

---

Տէմիրհօգայէն (Լ՝ոիրնէ) ապրիլ 12 թուով առ մեզ գրուած նամակէ մը հետևեալ քաղուածը կընեմք։

« Թէև քաղաքիս մէջ և շրջակայները հրատարակութեան արժանի դէպքերէ և այլ ոճրագործութիւնք պակաս չեն, սակայն առ այժմ լռութիւնը աւելի նախամեծար կը համարիմ. եւ այս անգամ միայն հետագայ եղելութիւնքը ձեզ հաղորդել կը փութամ, որոց մէջ չարագործաց մինչև օ՛ր աստիճան յանդգնութիւնը յայտնի կերևի, և որոց վրայ բարեխնամ կառավարութեան ազգուտնօրինութիւնը հարկ անհրաժեշտ է։

Մի քանի օր առաջ քաղաքէս ժամուկէս հեռի Բիսա-քէօրիւսի ըսուած տեղը քանի մը չէրքէզք տեղւոյս նշանաւոր թօրճու օղլու Ալի պէյի փեսան Հասիպ պէյի վրայ կը յարձակին, ձիէն վար իջեցնելով ժամացոյցը, քսակն և ձին կառնեն. ինքը շատ կաղաչէ կը պաղատի, օգուտ չը՛տեր. իրեն տաճիկ ըլալը կը յայտնէ, նոքա չեն հաւատար «էն էրմէնի սին» ըսելով. վերջապէս զինքը ճանչցնելու համար մինչև իսկ (տաճկութեան նշանը ցոյց կուտայ). անոր ալ հաւատ չընծայելով «էլհամ (մահմետական դաւանութիւնը) ըսել կուտան, որուն վրայ առածնին ետ կուտան պատուիրելով որ մարդու բան չըսէ։ Եթէ այսպէս շարունակէ, այդիներն անգամ երթալ դժուարին պիտի լինի։

« Ամսոյս 10ին կիրակի դիշեր ժամ 2 ին միջոցները քաղաքիս շուկային կեդրոնը մեր ազգայիններէն Սիրունեան սափրիչ Ղազարոսին սրճարանը մտնելով՝ մէջը գտնուած զարդ և կարասին մեծ մասը կը կոտրտեն, 150 ղուրուշի չափ ալ ստակն առնելով կերթան. վնասը հազար ղուրուշի չափ կը հաշուեն. եղելութիւնը կառավարութեան իմաց տրուած ըլլալուն՝ տեղւոյս Գայմագամ վսեմ. Թալաթ պէյի վրայ յոյս մեծ ունիմք, որ իր արդարասիրութեան և աչալուրջ հսկողութեան շնորհիւ, քիչ ատենէն հեղինակները գտնուելով իրենց արժանաւոր մրցանակն կրնդունին. օրինակ այլոց։ »

---

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զորեքշաբթի օրը մեր թերթը հրատարակուելէն յետոյ, օգոստափառ Սուլթանին կողմանէ երկու հեռագրեր քաշուեցան ծովային ու ցամաքային զինուորութեանց հրամանատարներուն։

Աւասիկ, հայերէն պատճէնները։

Ա.

« Սէրտարը-էքրէմ մեր՝ Ապտի փաշա, Գանուբեան բանակին հրամանատար Ահմէտ Էյուպ փաշա, չորրորդ բանակին հրամանատար Ահմէտ Մուխթար փաշա, եւ Պաթումի բանակին հրամանատար Հասան փաշա։

« Ռուսիոյ կառավարութիւնը մեր պետութեան հետ յարաբերութիւնները խզելով պատերազմ հրատարակած ըլլալուն պատճառաւ, մեք ալ ստիպուեցանք ի զէն դիմել՝ ապաւինելով Աստուծոյ արդարութեան, եւ բարձրափառ մարդարէին բարոյական օժանդակութեան։ Գիտէք, թէ մեք չհակառակեցանք համաձայնութեան եւ խաղաղութեան, եւ ցարդ մեր ձեռաց մէջ զէնք եւ մեր սրտից մէջ խաղաղութեան փափաքները տածեցինք, եւ խաղաղութեան պահպանութեան համար բարեկամ տէրութեանց կողմանէ տրուած խրատուց անսալով մէկտեղ աշխատեցանք յանմ մասին։ Սակայն թշնամին հաստատեց, թէ իւր նպատակն է՝ մեր իրաւունքն, մեր անկախութիւնն ու հայրենիքը բնաջինջ ընել, եւ թէ մինչև որ ասոնք զոհ չերթան, ինքը իւր փափաքանաց չհասնիր։ Առանց որեւէ իրաւանց եւ առանց որեւէ օրինաւոր պատճառի յարձակեցաւ մեր վրայ։ Կը յուսամ թէ իրաւանց եւ արդարութեան Աստուածն զմեզ յաջողութեան ու յաղթանակի արժանի կընէ։ Աստուծով, թշնամին իւր նպատակին չհասնիր, մեր զօրաց ջանքն, եւ մեր հաւատարիմ հպատակաց նիւթական ու բարոյական միութեամբն ու օժանդակութեամբը։ Կը յուսամ յԱստուած, որ մեր զօրքը զիս ամօթահար չընէր, օսմանեան փառքն ու պատիւը եւ նախնեաց ընթացքը անաղարտ պահելով։

Իմ յատուկ բարեւս ընծայեցէ՛ք՝ Ձեր տրամադրութեան ներքեւ գտնուող հաւայն հրամանատարաց, եւ իմ որդիքս եղող զօրականին. պետութիւնն ու ազգը զիրենք այս աւուր համար մնացած է. թո՛ղ այսօր կատարելապէս ի տես եւ հանդէս բերեն՝ մեր իրենցմէ յուսացած քաջութիւնն ու աներկիւղութիւնն։ Ձեր հրամանատարութեան աւանդեալ զօրաց պաշտպանած տեղերուն ամեն մէկ քարը եւ ամեն մէկ հողը՝ իրենց նախնիքներէն եւ հայրենեաց եղբայրներէն քանի՛ քանի հազար քաջաց ու նահատակաց յաղթանակաց ու արեան գոհարներովն գնո՛ւած են. թող պահպանեն նոյն տեղերը՝ թշնամւոյն բռնարարութենէն, եւ օսմանցւոց ոգեհատոր իրաւունքն, պատիւն ու անկախութիւնը՝ թշնամւոյն հարստահարութենէն։ Մեր զօրքը ցորչափ իւր նուիրական պարտքը կկատարէ, Աստուծոյ օգնութիւնը՝, եւ մեր մարդարէին հոգեւոր օժանդակութիւնը՝ իրենց առաջնորդ, եւ մեր բարեմաղթութիւնները միշտ նոցա հետ են։ Օսմանեան ազգը, իրենց զինուոր եղբարց իրենց երկիրները թողած որդւոց եւ ընտանեաց խնամակալք են. իրենց թագաւորն ալ յամենայնի իրենց հետ է. եւ պատրաստ է՝ ի հարկին, Խալիֆայութեան ու Սուլթանութեան ամենէն մեծ եւ նուիրական դրօշակն բառնալով, իրենց հանիլ եւ իրենց հետ իւր կեանքը դնել հայրենեաց պատուոյ՝ իրաւանց եւ անկախութեան համար։

« Աստուած յաղթութիւն պարգեւէ։ Ամէն։»

Բ.

Ծովային հրամանատարաց ուղղեալ հեռագրին առաջին եւ վերջին մասերն՝ բոլորովին առաջին հեռագրոյն նըմանն ըլլալով, զանց կընեմք թարգմանել, և միայն միջին մասն՝ որ խիստ տարբեր է և ուշադրութեան արժանի, կթարգմանեմք բառ առ բառ։

« Ձեր հրամանատարութեան աւանդեալ նաւատորմղին երթալիք եղերքը՝ թշնամւոյն ամենէն կարեւոր տեղերն են. նոյն տեղերուն ամեն մէկ քարը, ամեն մէկ հողը՝ մեր նախնիքներէն քանի՛ քանի հազար քաջաց ու նահատակաց յաղթանակին ու արեան գոհարներովն գնո՛ւած էին. բայց այժմ թշնամին կը տիրապետէ. այս եղերաց վրայ կառուցեալ բերդերն ու ամրութիւնք խոչ ու խափան կըլլան՝ ներսերը գտնուող մեր կրօնակցաց հետ ձեռք ձեռքի տալու. այսչափ աշխատութեամբ ձեռք բերուած նաւատորմղին նպատակը՝ Աստուծոյ դիմութեանը ապաւինելով, նախ քան զամենայն, նոյն բերդերն ու ամրութիւնները գրաւել է։ Այս տեղերը մեզի կսպասեն քանի՛ քանի՛ կրօնակիցք մեր, եւ մեզի հետ միանալէն յետոյ պիտի աղատին իրենց օրինաւոր իրաւանց դէմ եղած գրկանքներէն։ Մեր նաւատորմիղը թո՛ղ աշխատի՝ օսմանեան դրօշակը դարձեալ բարձրացունել նոյն վայրաց վրայ. չտապեն դիմադրել՝ օսմանեան ոգեհատոր իրաւանց, պատուոյն ու անկախութեան ջնջման ելնող թշնամւոյն »։

Օգոստափառ Սուլթանին այս հեռագրաց վրայ, բոլոր զինուորութեան կողմ-

մանէ զինուորական գործոց նախարարին միջոցաւ շնորհակալեաց ուղերձ մը, մատուցաւ նորին վեհափառութեան, զոր ընդունած ատենն ըսաւ.

«Սպարապե՛տ փաշա և զինուորակա՛նք։

«Գոհ եղայ Ձեր շնորհակալութեան «վրայ. այս շնորհակալիքը՝ զօրաց վրայ «իմ ունեցած վստահութեանս ու սիրոյս «փոխարինութիւնը կհամարիմ. պարտքս «է գոհունակութիւն յայտնել Ձեզ և ձեր «արդեանց համար։ Աշխարհի վրայ հայ-«րենեաց պահպանութենէն աւելի մեծ «փառք և պատիւ չկայ. դուք արդէն «առ այս կոչուած էք. հիմա ալ նոյն «փառքը արդեամբք պիտի ստանաք. «Ձեր վեհապետն ու օսմանեան ժողո-«վուրդը Ձեր փութաջանութեան կդի-«մէ, ի պաշտպանութիւն պատուոյ և «փառաց հայրենեաց, որ պատուական «է առաւել քան զոգիս մեր։ Կխնդրեմ «Աստուծմէ, որ մեր զօրքը յաջողեցու-«նէ՝ միշտ մեր գոհունակութեան, և «պատմութեան մէջ փառաւորուելու «արժանի ընթացից մէջ գտնուիլ»։

Երէկ ալ կառավարութեան կողմանէ առ ժողովուրդն ուղղեալ յայտարարութիւն մը հրատարակեցաւ, որ վերջին անցից և Բ. Դրան ընթացից վրայ տեղեկութիւններ կուտայ, և պատերազմին հրատարակուած ըլլալը կյայտնէ։

## ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պաթումի հրամանատար Հասան Թահսին փաշա՝ ապրիլ 14 թուով հեռագրեր է զինուորական գործոց պաշտօնատան։

«Առջի օրը ռուսական զօրաբաժին մը Դիւմբիւյէն Արփա-չայը անցնելով՝ կայսերական զօրաց պահականոցները կոխեր է. բայց այն տեղուանքը գտնուող կանոնաւոր զօրքը և Ձիւրիւքսուլը Ալի փաշայի տրամադրութեան ներքև գբաղնուող կամաւորք ռուսաց վրայ յարձակելով՝ քանի մը ժամ պատերազմելէն յետոյ, ռուսք դարձեալ փախեր են։ Այս պատերազմին մէջ 800էն աւելի ռուսաց մեռած և նոյնչափ զօրաց ալ վիրաւորուած ըլլալը ստուգուած է։ Մեր կողմանէ 11 նահատակ և 15ի չափ ալ վիրաւոր գտնուած է։

«Զրահաւոր նաւատորմիղէն չորս հատ և երկու շոգենաւ ռուսաց Բօթի նաւահանգիստը այս ժամուս ուժգնութեամբ ռմբակոծելով՝ ռումբերէն քաղաքին ամէն կողմը հրդեհ պատահած է և ծուխը մինչև երկինք կբարձրանայ։ Նաւատորմիղը կշարունակէ ռմբակոծութիւնը»։

Դարձեալ միևնոյն ամսաթուով հեռագրած է յիշեալ հրամանատարը։

«Ինչպէս ծանուցուած է այս աւուր հեռագրով, կայսերական կամաւոր զօրքը այս առաւօտեան ժամը 11էն մինչև երեկոյեան ժամը 11, ռուսաց հետ պատերազմեցաւ. թշնամւոյն կողմանէ մինչև ցվախճան պատերազմին անդադար շատ մը թնդանօթ ու հրացան արձակուեր է՝ բայց յիշեալ զօրքը՝ գեղեցիկ դիրքի մը մէջ գտնուելուն պատճառաւ, գոհութիւն Աստուծոյ, 2 նահատակէ և 3 վիրաւորէ զատ կորուստ ունեցած չէ. իսկ թշնամին խել մը կորուստ տուած է։ Զօրքը թողած չէ իւր դիրքը, և թշնամին ալ չէ կրցած առաջ անցնիլ»։

Հետևեալն ալ Պաթումի հրամանատարն հեռագրած է ապրիլ 15 թուով։

«Ձիւրիւքսուլը Ալի փաշայի հրամանին ներքև գտնուող կամաւորք չորս օրէ ի վեր պատերազմաւ անդրդուելի կը մնան։ Խել մը ռուս հետևակ զօրաց այս դիշեր ժամը 8ին դաղտնի յարձակիլը տեսնուելով՝ անմիջապէս պատերազմն սկսաւ, և մէկ ժամ պատերազմելէն յետոյ՝ թշնամին շատ մը կորուստ տալով ետ քաշուեցաւ մինչև բանակատեղին։ Կըսուի թէ Կիւրճիստանի մեծերէն Պէսիմ պէյ վիրաւորուած է։ Այս պատերազմին մէջ մեր կողմանէ կորուստ չկայ։ Թշնամին մերթ ընդ մերթ թնդանօթ կարձակէ. բայց դեռ պատերազմի սկըսած չէ։»

Վագըթ երէկուան թուովը գրած է։

«Լրագրոյս յատուկ հեռագիր.—14 ապրիլ։—Ձիւրիւք-Սուլի պատերազմին մէջ այսօր ռուսերէն 2 թնդանօթ և շատ մը զէնք առնելով՝ օսմանեան զօրքը յաղթութեամբ սահմանն անցաւ։ Զրահաւորք Շօկէթիլ քիւղաքաղաքն ու Բօթին կռմբակոծեն։ Ապա մանրամասնաբար կգրեմ»։

«Այս յաղթութեան լուրին վրայ, երէկ դիշեր պէտք եղած տեղերը լուսավառութիւն և ուրախութեան հանդէս եղաւ»։

Իսթամպուլ կգրէ։

«Խել մը պատերազմական զրոյցներ կան, բայց և ոչ մէկուն հաւատ կընծայուի։ Սա՛ ստոյգ է, որ ռուս զօրքը մտաւ Բումանիա և Դանուբի երկայնութեանը մինչև Կալաց ու Իպրայիլ եկաւ։ Կստուգուի, որ օսմանեան զօրքն ալ Քալաֆաթ անցաւ. այսպէս երկու կողմանց զօրքը դիմացէ դիմաց եկած ըլլալով՝ պատերազմը շատ մօտ է։ Բայց Անատոլիի կողմը առաջին հրացանն արձակուած է։ Մասնաւոր հեռագրայ նայելով՝ եթէ Անատոլի մտնող ռուս զօրքը 30 հազար է՝ այն տեղ եղած պատերազմը՝ կարևոր կհամարուի։ Ռուսիոյ շարժման գիծը ա՛յնչափ ընդարձակ է, զոր դժուարին է մեկնել. ոմանք ցոյց մը կհամարին»։

Նէօլոգոս գրած է թէ օսմանեան նաւատորմիղէն ռմբակոծեալ Շէօքտիլի բերդը գրաւուեր է. բայց դեռ այս մասին պաշտօնական տեղեկութիւն չկայ։

Ռուսական զօրաց յառաջապահները մինչև Եէրկէոյ հասեր են։

---

Երեսփոխանական ժողովոյ երկուշաբթի աւուր նստին մէջ, Քրիստոնեայ երեսփոխանաց կողմանէ եղած յայտարարութեանց վրայ, որոշուեր է որ արտաքին գործոց նախարարութիւնը՝ Եւրոպիոյ, և ներքին գործոց նախարարութիւնը՝ կուսակալութեանց ծանուցանէ, թէ ոչ-մահմետական երեսփոխանք կբողոքեն Ռուսիոյ դէմ՝ քրիստոնէից պաշտպանութեան պատրուակաւ ի պատերազմ ելնելուն համար, թէ՝ երբէք չեն կարօտիր Ռուսիոյ պաշտպանութեան, և թէ՝ քրիստոնեայք պատրաստ են նիւթապէս և բարոյապէս օգնել Թուրքիոյ։

Այս նստին մէջ լրագրական նոր օրինաց ծրագիրն ալ կարդացուեր, և երեսփոխանք խորին լռութեամբ լսեր են։ Ընթերցմանէն յառաջ ինչ ինչ դիտողութիւններ եղեր են, օրինաց խստութեան եւ պայմանաց ծանրութեան վրայ. սակայն նախագահին աղդարարութեամբ՝ որոշուեր է դիւաններէն դալէն յետոյ վիճաբանութեան ենթարկել։ Այս ծրագիրը կտրամադրէ, որ լրագիր և հանդէս հրատարակել ուզողները 50,000 էն 30,000 դրշ դրաւ դնեն, — դաւեշտական թերթ հրատարակել՝ արդիլուած ըլլայ, —օտար հպատակաց լրագրական արտօնութիւն չտրուի, և յառաջագոյն արտօնութիւն ունեցողները իրենց դեսպանատանց վաւերացմամբը երաշխաւոր տան՝ հաստատեալ օրինաց համաձայն վարուելու համար։

Երեսփոխանական ժողովոյ մեծագոյն մասին վրայ տեսնուած աղատամտութիւնը երբէք կասկածել չտար մեզ, թէ յիշեալ տրամադրութիւնք պիտի ընդունուին. տրամադրութի՛ւնք, որովք՝ արդէն կիսակենդան եղող օսմանեան նորածին լրագրութիւնը բոլորովին խեղդամահ պիտի ըլլայ։ Լրագրութեան ներկայ վիճակին, և լրագրութեան աղատութեան ամենաշատ օգուտներուն վերայ ճառել՝ աւելորդ կհամարիմք, որովհետև երեսփոխաններէն շատը գիտեն։

Երեքշաբթի աւուր նստին մէջ ալ, գաւառաց վարչական (իտարէ) ժողովոց մէջ ոչ-մահմետական ժողովրդոց կրօնական գլխոց գտնուելու խնդիրը դարձեալ յուզուելով՝ ջերմ վիճաբանութիւն եղեր, և երեք ժամու չափ տևեր է։ Երեսփոխանաց ոմանք առաջարկեր են, որ յունաց, հայոց և պապականաց կրօնական գլուխներն միայն գտնուին, որ կարգաւորեալ պատրիարքարաններ ունին. այլք պնդեր են որ բոլոր ժողովրդոց գլուխներն անխտիր գտնուին փոփոխակի։ Ասոնց դէմ, կրօնական գլխոց երբէք չը գտնուիլ առաջարկողները չարունակեր են իրենց առարկութիւնները. վերջապէս քուէարկութեան ենթարկել ուզուեր է. սակայն նախագահը նկատելով որ դեռ կշարունակէ վիճաբանութիւնն ու յուզմունքը, հարկադրեր է դարձեալ յետաձգել խնդիրը։

Երեսփոխանական ժողովոյ մէջ յուզուած նշանաւոր խնդրոց մէկն ալ այս է։ Որչափ լաւ և երկար խորհրդածութիւն ըլլայ, կարժէ։ Տարակոյս չկայ, թէ ոչ-մահմետական բոլոր ժողովուրդք յանհնարինս պիտի վշտանան, եթէ իրենց կրօնական գլխոց ժողովներէն արտաքսուիլը, և այսպէս իրենց տրուած առանձնաշնորհութեան մը ջնջուիլը տեսնեն, հակառակ հիմնական կանոնաց՝ որ կտրամադրէ չհպիլ հպատակ ազգաց արդէն ունեցած արտօնութեանց։

Երեսփոխանական ժողովոյ հինգշաբթի աւուր նստին ներկայացաւ՝ կառավարութեան հաշուեկշիռն, և առաջին ընթերցումն եղաւ։

---

Կայսերական կառավարութիւնը Պելճիդայէն ալ 50 հազար հրացան կգնէ։

— Օգոստ. Սուլթանին կողմանէ գոհունակութեան հեռագիր քաշուեր է՝ Պաթումի հրամանատարին։

— Անգղիոյ կառավարութիւնը հրաման ղրկեր է բացակայ հրամանատարաց, որ իրենց դունդերուն գլուխը դառնան։

# ՓՈՒՆՋ

— Աւստրիա կպատրաստուի եղեր զօրք իջեցուցնել Պոսնա, երբ ռուսական զօրքն դէպ ի Պուլղարիա յառաջանայ։

— Զինուորական գործոց նախարարն հեռագրով անդադար կրանակցի օսմանեան հրամանատարաց հետ, և հրահանգներ ու հրամաններ կուտայ։

— Օգոստափառ Սուլթանն հրամայեր է, որ օսմանեան հրամանատարներէն եկած հեռագրերն անմիջապէս իրեն ներկայացուցնեն։

— Զորեքշաբթի՝ և հինգշաբթի օրերը զօրք ու պաշար ղրկուեցաւ Պաթում, զբրահաւորներով։

— Պուլղարաց ազգային ժողովը, հաւանութեամբ Բ. Դրան, պաշտօնանկ ընելով զէքզարքն՝ Ֆիլիպէի Մետրապոլիտը տեղապահ ընտրեր է։

— Եւրոպայի ջուրերը գտնուող ամերիկեան նաւատորմիղին հրաման եղեր է, որ շուտով մէկտեղ ժողովին, ի հարկին՝ Պօլսոյ մօտ գտնուելու համար։

— Գարատաղի կողմերէն ալ մօտերս պատերազմական լուրեր կսպասուին։ Երկու կողմանէ զինուորական մեծ շարժումներ կըլլան։

— Լոնդրէի գաւառական լրագիրն ի լրոյ կհրատարակէ՝ պուլղարաց վերջին անցից պատճառաւ ձերբակալեալ և հարցաքննութեան ենթարկեալ թօսուն պէյի և իւր ընկերաց արձակուած ըլլալը։

— Օգոստ. Սուլթանն՝ երէկ կառքով և մեծ եպարքոսը դիմացն առած, թօփդափուի պալատը գնաց, և անտի Ա. յա-Սոֆիայի մզկիթն անցնելով՝ ցերեկային աղօթքն ըրաւ։

— Սերվիոյ իշխանութիւնը հարկադրեր է՝ զօրք ղրկել Սերվիոյ մէջ գտնուող ռուս կամաւորաց զէնքերն առնելու համար, որոնք չեն ուզեր եղեր դուրս ելնել երկրէն։

— Շէյխ-իւլ-իսլամ էֆէնտիի կողմանէ հրաման եղեր է բոլոր իմամներուն, որ օսմանեան զօրաց յաղթութեան և յաջողութեան համար աղօթք ընեն մզկիթներուն մէջ։

— Կրսուի, թէ եւրոպական կառավարութիւնք ազդարարեր են Ռումանիոյ իշխանութեան, որ անխափիր թոյլ տայ թէ՝ օսմանեան և թէ՝ ռուս զօրաց, երբ իւր երկրէն անցնին։

— Ռումանիոյ իշխանութիւնը ի պաշտօնէ ծանուցեր է Բ. Դրան՝ ռուսական զօրաց Բրուգն անցնիլը, և ռումանական զօրաց չկընալով դիմադրել՝ ետ քաշուիլը։

— Վիէննայի և Պերլինի լրագրաց ոմանք գրեր են, թէ Պուխարայի՝ Աֆղանիստանի՝ Բեռպիլիստանի և Քաշկարի էմիրները մէջերնին դաշնադրութիւն մը հաստատեր են, 500 հազար զօրք Ռուսիոյ վրայ յարձակելու համար։

— Պասիրէթի գրածին նայելով՝ կայսերական կառավարութիւնը նոր կարգադրութիւն մը պիտի հրատարակէ, որով՝ Թուրքիոյ մէջ գտնուող ռուս հրպատակք պիտի պարտաւորին իրենց գործերը կարգադրել և մեկնիլ։

— Անցեալները Տավուտ-փաշայի կողմը կամաւոր գրող Իպրահիմ էֆէնտիի այս անգամ ալ զինուոր գրելու սկսած ըլլալը ծանուցանելով Պասիրէթ, կհրաւիրէ որ ուղղոյը ամեն օր ժամը 1 էն մինչև 5 յիշեալ էֆէնտիին դիմէ։

— Բ. Դրնէն հինգշաբթի օրը հեռագրով ծանուցուեցաւ կուսակալութեանց թէ պարսիկ դեսպանատան կողմանէ ի պաշտօնէ կհերքուի՝ Թուրքիոյ դէմ պարսից կառավարութեան զինուորական պատրաստութեանց ձեռնարկած ըլլալուն զրոյցները, զոր լրագրաց ոմանք հրատարակած են։

— Հունգարիայէն երկու հոգի՝ փոխադարձ այցելութեան ղրկուած տաճիկ ուսանողաց ընդ առաջ եկեր են մինչև Ռուսճուգ։ Հոն իրարու հանդիպած ատենին ատենախօսութիւններ ըրեր, և հունգարացիք յայտարարեր են թէ զիրենք ո՛չ թէ իբրև հիւր այլ իբրև հայրենակից կընդունին։

— Դանուբեան կուսակալութեան խորհրդական պուլղար Եուվանչօ էֆէնտի՝ պաշտօնանկ եղեր և բանտարկուեր է։ Բայց պատճառն դեռ յայտնի չէ։ Ս Դամ պուլի գրածին նայելով՝ պաշտօնանկ եղողն այս Եուվանչօն չէ, այլ երկար ժամանակէ հետէ Շուրայի-Տէվլէթի անդամ գտնուող Եուվանչօ էֆէնտին։

— Մայրաքաղաքս իւր արուարձաններովը մէկտեղ պաշարման վիճակի մէջ դրուելու զրոյցը կհաստատուի։ Մօտերս կհրատարակուի այս մասին յատկապէս օրէնք մը։ Այս կարգադրութիւնն եթէ ըլլայ, հարկ կըլլայ դիշերները որոշեալ ժամանակէն աւելի դուրսը չմնալ, պանդոկներն գտնուողներուն երաշխաւորն առնուլ, և ամեն օր եկող գացողներուն ցուցակը ոստիկանութեան հաղորդել։

— Պասիրէթէն կիմանամք, որ Եգիպտոսի խտիվը հեռագրեր է Բ. Դրան, թէ պէտք եղած պատրաստութիւններն կըլլան առ այժմ 90 հազար եգիպտական զօրք սպառազինել, և իւր Հասան փաշա որդւոյն հրամանատարութեան ներքև դնելով Պօլիս ղրկելու համար և թէ՝ ի հարկին ինքը խտիվն ալ պիտի գայ։ Այս հեռագիրն օգոստափառ Սուլթանին ներկայացուեր, և Նորին վեհափառութեան գոհունակութիւնը հեռագրուեր է առ խըտիվն։

Միւս կողմանէ կըսուի, թէ առաջիկայ մայիսի սկիզբները մայրաքաղաքս պիտի գայ Նորին բարձրութիւնը։

— Շուրայի-Տէվլէթի դատական բաժնին երկրորդ նախագահ Իպրահիմ փաշա՝ ծանուցեր է մեծ Եպարքոսին, թէ իւր 12500 ղրշ ամսականին հարիւրին 40ը այսինքն 5000 ղրշ իրրև պատերազմական նպաստ կվճռուի մինչև ցվախճան պատերազմին, և թէ՝ իւր կառաց և հեծնելու ձիերը զինուորական պիտոյից համար կնուիրէ։ Ծխախոտի մաքսատան վերատեսուչ Սիւլէյման պէյ ալ՝ այսպէս կվճռուի իւր ամսականին կէսը։

— Երկուշաբթի օրը, ծովային գործոց նախարարը, պաշտօնատան մեծամեծաց հետ Այնալը-գավագի դարաստանը երթալով, ճաշելէն յետոյ, զրահաւոր նաւատորմիղին հրամանատարին բսաւ, «փա«շա՛, զքեզ՝ Աստուծոյ, և հրամանիդ ներ«քև գտնուող պաշտօնականներն ու զօր«քը՝ քեզ կաւանդեմ»։ Հասան փաշա ալ «ազգին և տէրութեան սիրոյն համար ամեն անձնուիրութիւն ընելու պատրաստ ըլլալը» յայտնելով, և հինգշաբթի առաւօտ Պէօյիւքտէրէի առջև գտնուող տորմիղէն մէկ քանին առնլով՝ դէպ ի Սև ծով ուղղուորեր է։

Արդէն ուրիշ մէկ քանին ճամբայ ելած են, և Սև ծովու խորերը կշրջագային։

## ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Պերլին • 23 ապրիլ։ — Բօսթ լրագիրը կը գրէ, թէ Բեղրսպուրգի գերմանական նախկին դեսպան Հէնրի իշխանը՝ Պօլսոյ դեսպան անուանուած է։

Վիէննա • 23 ապրիլ։ — Երեսփոխանական ժողովոյ մէջ հարցում եղաւ, թէ Աւստրիա ի՞նչ ընթացք պիտի բռնէ՝ Թուրքիոյ եւ Ռուսիոյ մէջ պատերազմ բացուած ատեն։

Հռոմ • 23 ապրիլ։ — Երեսփոխանական ժողովոյ մէջ Պ. Վիսգոնթի Վէնոսթա ծանօթութիւն պահանջեց՝ պատերազմ բացուած ժամանակ կառավարութեան բռնելիք ընթացից վրայ։ Արտաքին գործոց նախարարն պատասխանեց, թէ Իտալիոյ կառավարութիւնը իւր ընթացից մէջ ազատ մնացած է բանակցութիւններէն վերջն ալ, թէ՝ մինչեւ ցարդ բարեկամական յարաբերութեանց մէջ է տէրութեանց հետ, թէ՝ երբ դէպքերը պահանջեն, պիտի աշխատի խաղաղութեան վերահաստատութեան համար, եւ հաստատապէս որոշած է պահել իւր անկախութիւնն ու չեզոքութիւնը, թէ՝ ներկայ վիճակը պատերազմական պատրաստութեանց պէտք չունի, եւ թէ կառավարութիւնը եւ ո՛չ մէկ ձեռնարկութիւն չպիտի ընէ առանց հաւանութեան երեսփոխանական ժողովոյ։

Այս յայտարարութեանց վրայ լռեց հարցանող երեսփոխանը։

Վիէննա • 23 ապրիլ։ — Բոլոր կառավարութիւնք սկսած են աւելցուցնել՝ միջերկրական գտնուած իրենց նաւերուն թիւը։

Պերլին • 23 ապրիլ։ — Լուր կայ, թէ Բեղրսպուրգի անգղիական դեսպանն, եւ Լոնտոնի ռուսական դեսպանն իրենց հայրենիքը պիտի երթան հրամանաւ։

Բեղրսպուրգ • 23 ապրիլ։ — Հարաւային բանակին վիճակին վրայ եկած լուրերը գոհացուցիչ չեն։

Լոնտոն • 25 ապրիլ։ — Անգղիական Մայֆար անուն լրագիրը կգրէ, թէ պարսից ու ռուսաց կառավարութեանց մէջ յարձակողական ու պաշտպանողական դաշնադրութիւն մը հաստատուած է։ Պարսից կառավարութիւնը յանձն առած է ռուս զօրաց անցքը դիւրել, իսկ Ռուսիա խոստացած է՝ պարսից վերադարձնել Թուրքիոյ ձեռքը գտնուող Գօթթոր ըսուած երկիրը։

Լոնտոն • 24 ապրիլ • — «Շատ աշխատեցայ խաղաղութիւնն անվրդով պահելու համար • բայց անլուծանելի խնդրոյ մը համար աշխատած եմ եղեր», ըսեր է լորտ Տէրպի, ծերակուտին մէջ»։

Փարիզ • 24 ապրիլ • — Զրոյց կայ Պօրսային մէջ, թէ Ռուսիա «Թագաւոր Ռումանիոյ» տիտղոսը տալ խոստացեր է Կարոլոս իշխանին։

## ԽՐԱՏՔ ԸՆՏԱՆԵԱՑ

### ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ — ՈՐԴԻՔ. — ԸՆՏԱՆԻՔ

Արժաչու վարժարանին աշակերտ յարգոյ Յակոբոս Պ. Սրապեանի թարգմանած, և տեղւոյն տպարանէն ի լոյս ընծայուած Մէյնան Շալոնի նշանաւոր հեղինակութիւնն է, որ երեք կարևոր կէտերու՝ ամուսնութեան, որդւոց և ընտանեաց վրայ կխօսի, խիստ օգտակար է մեր ամեն կարգի ազգայնոց համար։

Կը ծախուի Պոլիս Զագմագճըլար փողոց թիւ 20, Յովսէփ Գալաֆեանի գրատունը։ Գին 1 ֆրանգ։

## Ի Լ Ա Ն
## ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Նանը ազիզ իտարէսի տէյիրմէնլէրի հասըլտիքնտան սահթըլաճագ օլան իբի եիւղ պին գըյէ քէփէկին էսմանը եիւղլիք գայիմէ եիւղ ղրուչա օլարագ փէշինէն ախզ օլունմագ շարթը իլէ պէհէր գըյէսի օն ալթը փարայա թալիպի էօհտէսինտէ օլուպ նիսանը ռումինին օն սէքիզինճի փաղար իրթէսի կիւնի գարարը գահթիսի վերիլէճէք ֆիրուխթ օլունաճաղընտան իշթիրասընա թալիպ օլանլարըն եէվմը մէզբիւրտէ Տարը շուրայի ասքերկյէ կէլմէլէրի։

Պապը Սէրասքէրի

1877 Նիսան 12

---

Էօքչէ չիվիսի, քըյէ եէտի պին, պէհէր քըյէսի իւչ ղրուչ եէկիրմի պէշ պուչուք փարա։

Վիտալը չիվի, քըյէ տէօրթ պին, պէհէր քըյէսի տէօրթ ղրուչ եէկիրմի իւչ փարա։

Օլթան իվիլի, քըյէ պին պէշ եիւղ, պէհէր քըյէսի օնտօքուղ ղրուչ պէշ փարա։

Զիլէ իվիլի, քըյէ եէտի եիւղ, պէհէր քըյէսի ֆըրք տէօրթ ղրուչ իւչ փարա։

Պաշրդ չիվի, քըյէ եէտի եիւղ, պէհէր քըյէսի տէօրթ ղրուչ եէկիրմի իւչ փարա։

Ֆունտուրա քափսօլը, ատէտ ալթը միլիոն, պէհէր պին ատէտի իւչ ղրուչ օթուզ իւչ փարա։

Պէյքօզ քալէվրահանէսինէ լուզումի օլուպ մուպայեա օլունաճագ պալատէ մուրագգամ էշեանրն պահասը մանքպուզ սէնէտլէրի վիրուտինտէ սիմ մէճիտիյէ եէկիրմի ղրուշա վէ սիմ մէճիտիյէ վերիլմէտիյի հալտէ փիտացա ֆիյաթը յըրլա պիլ հիսապ ֆարքը յըրլա պէրապէր քայիմէ օլարագ պէր վէճհի փէշին նիզամիյէ խաղինէսինտէն վերիյմէք չարթը յըրլա ֆիեաթը մուրաքքամէլերի իլէ թալիպի էօհտէսինտէ օլուպ նիսանը ռումինին օնսէքիզինճի փապար էրթէսի կիւնի գարարը գահթիսի վերիլէճէյինտէն իթա իթմէյէ թալիպ օլանլարըն եէվմի մէզբիւրտէ Տարը շուրայի ասքերկյէ կէլմէլէրի։

Պապը Սէրասքէրի

14 Նիսան 1877

---

Ասքիրի ճէնապը միւլիքեանէյէ մախսուս օլուպ էյպիսէ անպարրնտան խարիճէ տիքտիրիմիչ օլան տօն վէ կէօմլէք վէ սայիրէ էսմանը մէզբիւր անպարտան սահիպլէրինէ իթա օլունմագտա պուլունմըշ օլմաղլէ, պու միսիլլու էշեա տիքիւպատէ եէտլէրինտէ բուսուլա օլանլէրին տօգսան իւչ սէնէսի նիսանընդն օն պէշինճի կիւնինտէն նիհայէթ եէկիրմինճի կիւնիւնէ գատար անպարա կիտուպ՝ ադչէլէրինի ալմալերի, վէ պունտան սոնդրա պու կիպի բուսուլա կէօթիւրէնլէր օլուր իսէ՝ բուսուլալէրին հավի օլտըղը մէպալիդին սայը միրի իտիլէճէկի, վէ շայէտ եէտլէրինտէ հրֆզ իտերլեր իսէ՝ իլերուտէ զուհուրինտէ իթիպար օլունմայաճաղը իլան օլունուր։

13 Նիսան 1877

Պապը Սէրասքէրի

---

Էվլատրմ կարապետ եղեկիէլեան պիր չօգ տատմլարա պօրճ իտերէք, ասհապը մանթլուպլարտան պաղէն պանա կէլմէքտէ օլտրգլէրինտէն՝ պու սեպէպտէն էվլատրմ մերդումըն պէնիմէջ ասլա իշի օլմատըգտան պաշդա, քէնտուսինին տախի ախղուիթա իշի օլմատըղընտան՝ քիմսէնին պիր ադչէ վերմէմէսինի վէ վերտիքլերի հալտէ թարաֆըմա միրաճաաթ իթմէմէլէրի իլան օլունուր, Ոսկերիչ

Խ. Եղեկիէլեան

## Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ
### ԳԻՇԵՐՕԹԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ ՅԱՐՄԱՇ

Անցեալ օգոստ. ամսոյ 18րդ օրն վարժարանս արձակուրդի օրերն աւարտեալ ըլլալով՝ աշակերտներն դարձած են և արդէն դասուց աւանդումն իսկ սկսուած է։

Այն ծնողաց կամ որբերու խնամակալ մարդասէր բարերարաց որ իրենց զաւակները կամ որբը վարժարանիս խնամոց յանձնել կուզեն կը յայտարարեմք թէ՝

Ս. Ղեւոնդեանց գիշերօթեայ վարժարանս յառաջադէմ վարժարաններու մեթոտով կանոնաւորեալ խիստ բարեկարգ վարժարան մ'է։

Կ. Պոլսէն և այլ քաղաքներէ փոքր ինչ հեռաւորութիւնը թէև ոմանց համար անհաճոյ թուի, սակայն կերպ մը բարիքէ ծնողաց աչքէն և զբօսալից վայրերէ հեռի անփոփ և անդրաղ մտօք միայն ուսման պարապելու կողմանէ։

Ուսմանց տեսակներուն ամենը, նկարչութեան ամեն ճիւղերը և լեզուներէն երեք միայն, հայերէն, գաղղիերէն և տաճկերէն կաւանդուին, բայց ոչ բնաւ վեր ի վերոյ կամ թերի։

Ամեն ուսանելի առարկայից համար ընտիր և յաջողակ դասատուներ կան։

Աշակերտաց կեանքն և առողջութիւնը խնամով պահպանելու համար վարժարանս իր մէջ յատկապէս մշտնջենաւոր բժիշկ կպահէ վկայեալ և յաջողակ, և բաւականաչափ դեղարան։

Աշակերտին տարեկան թոշակն է 32 լիրա օսմանեան որոյ մէջ են, երթևեկութեանց թղթատարութեանց և սովորական ադանելեաց ծախքէն զատ, ուրիշ բոլոր ծախքերը։

Արձակուրդի կամ պարապոյ օրերը բոլոր տարին միայն մէկ ամիս է և ո՛չ բնաւ աւելի։

Միշտ բաց է և բաց պիտի մնայ վարժարանս՝ որ ատեն որ ուզեն՝ ազատ են ծնողք կամ բարերարք իրենց զաւակները կամ սանները տալու։

Որոնք որ աշակերտ պիտի ղրկեն մեզ՝ պէտք է կամ Պոլիս Փունջ լրագրոյ արտօնատէր մեծ. Համբարձում էֆ. Ալաճաճեանի հետ տեսնուին (Ալաճա–համամ խանը խալիլ թիւ 19) և կամ հոս մեզի հետ թղթակցին։

1876 սեպտ. 1 — Խորէն Եպիսկ.
Ի Վանս Ս. Ս. Աստուածածնի — Վ. Արմաշու
յԱրմաշ

---

Պոլիս, կամրջին գլուխը, վալիտէ-Սուլթանի նորաշէն խանութներէն թիւ 4, Մատթէոսեանց խանութը, տաճկերէն, հայերէն և գաղղիերէն ամեն տեսակ հին և նոր հրատարակեալ գրքեր, դպրոցական և այլն, կգտնուին գոհացուցիչ դնով։


# ԱՌ ՍՊԵԳԱԿՆ

ՄԵԾ ՏՈՒՆ ԴԵՂԱԴՈՐԾՈՒԹԵԱՆ
ԵՒ ԴԵՂՕՐԷԻՑ
## Վ · Ծ Ա Ն Ն Ի
Բերա Մեծ փողոց Ադաճամի թիւ 77
ԵՒ
Կ. Պոլիս Կամուրջի հրապարակը թիւ 1—2

Եւրոպիոյ առաջին գործարանաց հետ յարաբերութեամբ կապուած, և իր դեղորէից ընտրութեամբն և գնոց չափաւորութեամբ հրաշակուած։

Մակի_մթերանոց անուանի Հ. Նէսթլէ քիմիագէտին շինած Ֆն լաֆրէյն, որոքփրիկ ոչ տղայոց, տկար կազմ ունեցող և հիւանդութենէ ապաքինելոց միակ սննդարար ուտելիքէն համայն Եւրոպիոյ մէջ ընդունուած և ամեն գըլխաւոր բժշկաց հաւանութիւնն ստացած։

Հոն կը գտնուի նաև.

Քոնֆիս (մատակի խմորեալ կաթ) որ մեծ համբաւ ունի Եւրոպիոյ մէջ և շատ կը փնտրուի։

Սէլֆոն պը Ֆէնէն, զուտ և մաքուր, Բէլթիէ, Տիւպօսք, Ժօպսթ և Էվանս Լէդէ ճարտար քիմիագէտներէն պատրաստուած։

Զկան ձէթ, զուտ, Քրիսթիանայի Բէթէր Մէլէրի գործարանէն եկած։

Եղէրդէ (հինտիպա) խահուէ, Լուտվիկսպուրկի Հ. Ֆրանք գործարանէն եկած ստամոքսի ուժ տուող և ախորժակ բացող, որ հասարակ խահուէի հետ խառնելով՝ գինը մեծապէս կիջեցնէ՝ առանց համն ու հոտը փոխելու։

Արուեստական սառոյց ամեն ժամու մէջ։

Տէ-ժէնէ ջուր, մագերու անվրիպելի ներկ։

---

## PILULES HOLLOWAY
### ԴԵՂԱՀԱՏԻՔ ՀՈԼԼՕՈՒԷԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն տեսակ անկարգութեանց համար իրաւ ընտիր է սոյն դեղահատը, նաև ջղային տկարութեան, ուժաթափութեան և տխրութեան համար. կը ջնջէ և անհետ կընէ ամեն տեսակ անչափաւորութեանց հետքերը։ Արտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի. արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանները կը զօրացնէ։ Իր դեղական մեծ ազդեցութեամբը սրտախառնութիւն, կուծուութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, գլխի ցաւեր կը վանէ. մարսողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաքրուելով բոլոր այն աղտեղութիւններէ՝ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական գիրքը կզգենու։

---

## ONGUENT HOLLOWAY
### ՍՊԵՂԱՆԻ ՀՈԼՕՈՒԷԻ

Մորթային հիւանդութիւնք և վերք բուժելու մասին ունեցած պալսական յատկութեանցը չհաւասարիր բնաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վերքեր, ուռեցք, քաղցկեղ (չիրիփէնչէ), սրունից և ստեանց վերքեր կամ բոլորովին կանցնին և կամ կլաւանան. օգտակար է նաև հարբսխի, հաղի, սրտի բարտիման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած հիւանդութեան։ Իր կազդուրիչ և զօրաւոր ազդեցութեամբը խոյլ (սըրաճա) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ի՛նչ աստիճան որ ըլլայ՝ կը դիմադրաւէ։

Այս դեղերուն գործածութեան եղանակը նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և մասնաւորապէս Պահճէ–գափու Թաշ խանի կողմերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7՝ կը ծախուի։

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հեղինակն տոքթոր Հոլլօուէ ի Լոնտոն Օքսֆորտ փողոց թիւ 533։


---

### ՊԱՏՄԱՆԵՔ ՓՈՒՆՋԻ

1.—Փունջը ՁՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի։

2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՝ մայրաքաղաքիս և իր արուարձանաց և թէ գաւառաց համար։

3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի։

4.—Տեղական ու գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ։

5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ ծախողներու քով։

6.—Ծանուցման տողը 3 ղրուշ է մէկ անգամի համար։ Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար։

7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն–Տէր Հ. Ս. Ալաճաճեան, Կ. Պոլիս Ալաճա–Համամ խալիլ խան միջին յարկ թիւ 19։


ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ · Ս · ԱԼԱՃԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐ· Ս · Ղ· ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Բիզա փաղա խան թիւ 3